Հովհաննես Թումանյան

Սասունցի Դավիթ

4

Բ ՄԱՍԸ

1

Ընկավ Մելիքն ամբարտավան ու պատերազմն արյունոտ:
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց հայոց առավոտ:
Գըտավ կորցրած հանգիստն էլ ետ ամենն իրեն հարկի տակ,
Վեր բարձրացավ կըտուրներից ծուխը բարդ-բարդ, կապուտակ:
Կըտրիճ տըղերք զենքի տեղակ առան մանգաղ, գերանդին,
Ջրը՛նգ, զրը՛նգ, զըվարթ ձենով գործը թընդաց մեր հանդին:
Դը՛մբ, հա դրը՛մբ, թըմբուկ զարկին, զուռնեն հընչեց զիլ, ուժեղ,
Քեֆ, կեր ու խում, պար ու խընդում, ու հարսանիք ամեն տեղ:
Ապրի Դավիթ, , որ մեզ տըվավ ուրախ օր,

Իրեն կանանչ կարմիրն էլ թող էսպես կապենք բախտավոր…
Ու նըշանեց Ձենով Օհան, Դավթին արավ տուն ու տեղ,
Աղջիկ ուզեց արժանավոր, թագավորի զարմ ու ցեղ:

Խլլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց նրրան կին,
Չրքնաղագեղ ու փահլևան էն Չրմրշկիկ Սուլթանին:

2

Բայց թե աղջիկ կուզես չրքնաղ, անպարտելի փահլևան:
Արի՛, գրնանք Կապուտ Բերդի թագավորի աղջրկան:
Խանդութ խանո՜ւմ… հուրի ասա, մի աննրմա՜ն, մի անտե՜ս…
Խանդութ խանո՜ւմ… հալվում էին սրրտերն ամեն մոմի պես:
Օխտը տարի քառսուն հրսկա թագավորներ աժդահակ

Գուրզերն առած նրստած էին նրրա բերդի պատի տակ.
Բայց գեղեցկուհին իր ամրոցում ահագին,
Ու չէր զարկում կարմիր խնձորն և ոչ մեկի թիկունքին:

3

Ձենը ելավ, աշխարք ընկավ, գրնաց, հասավ Կապուտ Բերդ,
Թե մեծ կրռվում հաղթեց Դավիթ Մրսրա տիրոջն անհեթեթ:
Էս հաղթական լուրի վրրա քանդվեց սիրտը սիրունի.
Ա՜խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լիներ երանի…
Երնեկ տրվավ՝ խելքը թրռավ, ուշքը թրռավ դեպ Սասում,
Դավիթն է միշտ մրտքի միջին, Դավիթն է միշտ երազում:

4

Երկու աշուղ կանչեց Խանդութ, ոսկի տրվավ լիառատ,

Գնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք, Զոջանց տունը բազմահաղթ,
Իմ գովքն արեք Դավթի առաջ, սերրս սիրտը ձրգեցեք,

Ու կըտրեցեք աչքի քունը, սրրտի հանգիստն կըտրեցեք:
Ապա ինձնից բարով արեք, ասեք՝ մինչ ե՞րբ մրնամ քեզ,
Ձիավորված < . . . >թրռած՝ ե՞րբ պիտի գաս ինձ տանես…
Սազներն առան աշուղները ու հողից հող <. . .>,
Սազ անելով եկան հասան Սասմա քաղաք, Զոջանց տուն:
Բարով տրվին շեմքում նստած էն ջոջ Ձենով Օհանին,
Է՞ս է, ասին, աստվածապահ Զոջանց տունը :
Է՛ս է, ասավ Ձենով Օհան, ի՞նչ եք ուզում դուք Սասուն:

Մենք <. . .>, աշուղներ ենք, Դավթին կուզենք դյուցազուն:
Խանդութ խանում ղրրկել է մեզ իր գովքն անենք Դավթի մոտ,
Պատմենք անտես էն սիրունի անքուն սերը ու կարոտ:
Աստված ինքը թող շեն պահի Զոջանց տունը փառավոր,
Շեն պահողին ապրած պահի [էն քաջ Դավթին) <…>:
Զոջանց պարծանք քաջ Դավիթը ո՞րն է արդյոք, բարեկա՛մ:
Քաջ Դավիթը, որ լրսել եք, ես եմ, ասավ, հենց որ կամ.
Ինչ որ Դավթին պիտի ասեք, իմ առաջին ասեք դուք:
Էսպես ասավ Ձենով Օհան, աշուղները <. . .>
Նրստոտեցին ծալապատիկ, <. . .> ,

Ու էրվելով, օրորվելով սազներն առան ծրնկներին:
Օրհնյալ աստված, տեր բարերար,
Քու զորքն է շատ, քու գործն արդար.
Դու պահապան կրտրիճ Դավթին,
Կրտրիճ Դավթին, իր մուրատին.
Իրեն մուրատն իրեն սրրտում,
Իրեն սրրտում Կապուտ Բերդում…

Օրհնյալ աստված, բանդ ու բարիդ.
Ամենը սուտ, դու ճըշմարիտ:
Դու, որ <. . . > ըսկըզբանե

Ըստեղծել ես < . . . >

Խանդուք խանում Դավթի համար,
Դու արժանի անես իրար:
Վա՛յ քու տունը քանդվի, Խանդո՛ւք,
Վա՛յ , անգո՛ւք,
Դու քու անհաս աշտարակում,
Աշխարհ ամեն քու կըրակում.
< ..... >
Հասակն ասես՝ շիտակ, Դավի՛թ, դրախտի միջում կանգնած նոճին,
Ա՛խ, կանգնած նոճին.

Ծըծերն ասես՝ ջուխտակ, Դավի՛թ, զանգակներ են ծոցի միջին,
Ա՛խ, ծոցի միջին.
Աչքերն ասես՝ ծով են, Դավի՛թ, ու ցոլան աստղ ու արև,
Ա՛խ, աստղ ու արև.
Ունքերն ասես՝ սև են, Դավի՛թ, սև ամպերը ծովի վերև,
Ա՛խ, ծովի վերև.
Ճակատն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, էն նոր ձընած դաշտը սերսուփ,
Ակռեքն ասես՝ գերմակ, Դավի՛թ, լա< լ > մարգարտի շարոց են սուրբ.
Ծամերն ասես՝ ճոխծամ, Դավի՛թ, կրունկն են ծեծում հողին հավսար,
Վիզը ասես՝ ճոճան, Դավի՛թ, շողման կլափն ու շուրթը լար…